

**«ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ**  
Ժողովի

ք. Երևան

15 փետրվարի 2019թ.

Ժողովի սկզբում նախագահող ընտրվեց Գագիկ Գրիգորյանը, քարտուղար՝ Լիաննա Գալստյանը: Ժողովի նախագահողը տեղեկացրեց, որ կազմակերպության 171 անդամներից ներկա են 91 անդամ, և ժողովը իրավազոր է: (Մասնակիցների ցուցակը կցված է արձանագրությանը:) Այնուհետև ժողովի նախագահողի թույլտվությամբ, մինչև օրակարգի հաստատումը, ելույթ ունեցավ կազմակերպության գործադիր տնօրեն պարոն Ա.Ներսիսյանը, ով տեղեկացրեց, որ կազմակերպության անդամների կողմից ստացվել են առաջարկություններ ժողովի օրակարգում նոր հարցեր ընդգրկելու վերաբերյալ: Ծավալված քննարկումների և քվեարկության արդյունքում որոշվեց հաստատել հետևյալ օրակարգը.

**Օրակարգ՝**

1. Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները հաստատելու մասին
2. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

**1. Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները հաստատելու մասին**

Հարցի վերաբերյալ ելույթներ ունեցան պարոնայք Իգոր Մկրտումյանը և Արման Ներսիսյանը, ովքեր հանգամանալից տեղեկատվություն ներկայացրեցին 2016-2018 թվականների ընթացքում Կազմակերպության ծավալած գործունեության և գույքի օգտագործման մասին: Ելույթների ավարտից հետո կազմակերպության անդամների կողմից տրվեցին հարցեր: Պարոնայք Ի. Մկրտումյանի և Ա. Ներսիսյանի կողմից համապատասխան պարզաբանումներ ստանալուց հետո կազմակերպության 2016-2018 թվականների գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության և ձայների 89 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ հարաբերակցությամբ հաստատվեց: (Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները կցված են սույն արձանագրությանը:)

**Որոշում՝ Հաստատել «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի 2016-2018 թվականների գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները:**

## 2. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Ընդմիջումից հետո ժողովը վերսկսեց իր աշխատանքները: Մինչ հարցի քննարկումը ժողովի նախագահողը մասնակիցներին տեղեկացրեց, որ ժողովը տվյալ պահին իրավագոր չէ, քանի որ տվյալ պահին ժողովին ներկա չէ կազմակերպության անդամների կեսից ավելին: Ժողովի նախագահողն առաջարկեց ծավալել աշխատանքային քննարկում կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցի շուրջ: Տեղի ունեցած մտքերի փոխանակության արդյունքում, կարևորելով և առաջնահերթ համարելով կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը, կազմակերպության անդամների 1/3-ը հանդես եկան նախաձեռնությամբ՝ սույն թվականի փետրվարի 28-ին անցկացնել կազմակերպության արտահերթ ժողով հետևյալ օրակարգային հարցերով.

- Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
- Կանոնադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո արտահերթ ժողովի անցկացման ժամկետը նշանակելու մասին

Ժողովը նախագահող՝

Գ. Գրիգորյան

Քարտուղար՝

Լ. Գալստյան